

Պաշտոնական ընդմահուսի կարծիք

Ֆիզրան Գալստյանի

«Հատկանիշներ համապատասխանեցնող արտապատկերումների հայտնաբերման խնդրի վիճակագրական և հաշվողական բարդությունը» թեմայով Ե 13 05 «Մաթեմատիկական մոդելավորում, թվային մեթոդներ և ծրագրերի համայնքներ» մասնագիտությամբ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Մեքենայական ուսուցման (ՄՈ) մեթոդների ու դրանց վրա հենված տեխնոլոգիաների բուռն առաջընթացը նպաստում է նաև այս բնագավառից բխող խնդիրների վիճակագրական հիմունքների մշակմանը Տ. Գալստյանի ատենախոսական աշխատանքը վերաբերում է այդպիսի մի կարևոր խնդրի, որ ծագում է ՄՈ գանազան կիրառություններում, ինչպեսօրինակ կոմպոտերային տեսողությունը, րևական լեզուների մշակումը, կամ կենսաինֆորմատիկան Այս ոլորտներում պահանջված տարբեր լուծումներ կարող են հանգել բազմազան կետերի նրկու բազմությունների համապատասխանեցնող արտապատկերման հայտնաբերման անկրթելիությանը:

Չնայած, որ սա գրականության մեջ լայնորեն քննարկված թեմա է, Գալստյանը այն ուսումնասիրում է առավել ընդհանրացված դրվածքով, կամ, այլ խոսքով, իրականության մեջ առկա բարդությունների ու սահմանափակումների պարզազայում: Ընդհանրապես, «սահմանագանց» կամ *outher* կետերը գիտումները մշակման մարտահրավեր են վիճակագրական ու ՄՈ ալգորիթմների կայունության ապահովման գործում: Այս դեպքում նս, երբ տվյալների հավաքածուները չեն պարունակում նման կետեր, համապատասխանեցնող ընթացակարգի վիճակագրական հատկությունները արդեն հայտնի են Մինչդեռ, վերոհիշյալ կերտություններում, մեծիվ մասամբ, նախապես պարզ չէ համապատասխանող կետերի քանակը: Կամ ոչ բոլոր կետերը կարող են ունենալ իրենց համապատասխանող Ատենախոսության մեջ, հենց այս սահմանափակումների պայմաններում է կատարվում համապատասխանեցման խնդրի վիճակագրական բարդության վերլուծությունը:

Ընդհանուր առմամբ, աշխատանքի արդյունքները վերաբերում են տվյալների հավաքածուների համապատասխանեցմանը տարբեր շտեմարաններում թեզը քննարկում է խնդրի տեսական և գործնական կիրառություններ Մատնավորապես, այն անդրադառնում է ինչպես հատկանիշների համապատասխանեցման խնդրի տարբեր դրվածքների, այնպես էլ, տարրեր տվյալների համար մշակված ալգորիթմների կիրառությունների:

Ըստ կառուցվածքի, հետազոտության նյութը շարադրված է չորս գլուխներում ներածություն և երեք հիմնական գլուխներ:

Ներածությունը հանգամանորեն անդրադառնում է խնդրի ձևակերպմանը, ներմուծում հիմնական հասկացությունների սահմանումները, ինչպես նաև շարադրում նախկինում ձեռք բերված արդյունքները:

Երկրորդ գլխում Գալստյանը դիտարկում է խնդրի այնպիսի դրվածք, որտեղ համապատասխանեցվող երկու բազմություններից մեկում առկա են սահմանագանց կետեր (ուրիշ բաշխումից եկած տվյալներ, կամ շատ աղմուկ պարունակող տվյալներ) իսկ մյուսում ոչ:

երրորդ գլխում գիտարկվում է Լավաթը գլխի խնդրի առկա խիստ տարբերակ, ակն է՝ համապատասխանեցվող երկու բազմություններն էլ պարունակում են առայսին ասիմետրազանց կետեր

Իսկ վերջին գլխում, ուսումնասիրվում է հեղինակի կողմից առաջարկված և այլ հայտերի համապատասխանեցման ազդրիթմների կիրառությունները կենտրոնչական տվյալների շտեմարանի սրիևաով Ներկատված վործերի արդյունքները գույց են տալիս առաջարկված միջոցների արդյունավետությունը իրական տվյալների համար

Թեզուսում նախագծված են ազդրիթմներ, որոնք ենևկում են օպտիմիազացիայի մեթոդների վրա, ինչպես եսևս վերաանակերպվում են որպես գրաֆներում ամենաեան հոսքի հայտնաբերման ինդիք Հեղինակը փորձնականորեն իրմևավորում է առաջարկված ազդրիթմների ատավետությունը հայտերի այլ մեթոդների նկատմամբ թաև համապատասխանեցնող արտապատկերման ճշգրտության

Ատևնասխտությունը ի մի է բերում մեկ ամբողջական թնմային վերաբերող գիտական արդյունքներ, թվանդակության, շարադրանքի, և ներկայացման որակի բարձր մակարդակով Թեզի հիմնական արդյունքները տազարված են չորս իրապարկությունների տեսքով, որից երկուսը հեղինակավոր միջազգային հարթակներում հողված և գիտաժողովի էյուրթ

Այնուհանդերձ, իննելով աշխատանքի որակից ու արդիականությունից, ցանկայի կիներ տևսնել հեղինակի աշխատանքների՝ ազլել լայն միջազգային ընողրկում Հավանաբար, պետք է նշել նաև, որ առաջարկվող ազդրիթմները կարկի էր փորձարկել հավելյալ կիրառական ինդիքներում, օգտագործելով համապատասխան շտեմարաններ, որով թեզը կարող էր ապահովել առավել ծավալուն ինտազուտման ժամկույր՝ ստանալով նաև տվյալագիտական լրացուցիչ մշակումներ

Ասակայ, նշեք, որ այս էանգամաները չեն նսնազնում ատևնասխտության կշիռն ու կարևորությունը, ինչի վկայությունն են մնող սերված տեսական գիտեստականներն ու ազդրիթմների արդյունավետության վերլուծությունները

Ըստ ամենայնի, Տիգրան Գալստյանի աշխատությունը թնուության է ենթարկում վիճակագրական կարևոր ինդիք և առաջադրում արժևավոր յուծումներ ՄԱ կիրառությունների համար Այն ավարտուն գիտական նյուրթ է, իսկ նրա հեղինակը արժանի է Խ 13 05 «Մաթեմատիկական մողբևավորում, թվային մեթոդներ և ծրագրերի համալիրներ» մասնագիտությանը Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհակար

«Ք ԳԱՐ ԻԱՊԻ» ակազ գիտաշխատող,
ԵՊՀ Մերենայական ուսուցման լարորատորիայի ղեկավար,
Ք.մ.զ.թ. Աշոտ Հարությունյան

22 ապրիլի, 2024թ



Արարատ Գալստյան
Խաչատրյան ԿՏ

գիյց գլխը Դ. Արարատյան
29